2002, ՆՈՅԵՄԲԵՐ Բ, ԹԻՎ 22 (138)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հովվապետական այցը Սիդնեյ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսն իր հովվապետական անդրանիկ այցը կատարեց Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմ:

Նորին Սրբությունը նոյեմբերի 14-ին իջեւանեց Ավստրալիայի Նյու Սաութ Ուելս (Նոր Հարավային Ուելս) նահանգի վարչական կենտրոնում՝ Սիդնեյում:

Ամենայն Հայոց Հայրապետին տեղի հայ համայնքն ընդունեց ջերմությամբ եւ մեծ հուզմունքով:

Կիրակի՝ նոյեմբերի 17-ին, Վեհափառ Հայրապետը Սիդնեյի մայր տաճարում մատուցեց Սբ. Պատարագ: Սրբազան արարողությանը մասնակցում էին շուրջ 1500 հավատացյալներ եւ մի շարք ազդեցիկ պաշտոնյաներ, որոնց թվում՝ նախարարներ, խորհրդարանի անդամներ եւ եկեղեցիների պետեր:

Իր քարոզում Վեհափառ Հայրապետը գնահատանքի խոսք ուղղեց Ավստրալիայի դաշնային կառավարությանը՝ հայ ժողովրդի հանդեպ ցուցաբերած հարգալից վերաբերմունքի, իսկ ավստրալահայ համայնքին՝ մայր հայրենիքին աջակից լինելու համար:

Նույն օրը՝ երեկոյան, Նորին Սրբության եւ ավելի քան 400 հյուրերի մասնակցությամբ տեղի ունեցավ պաշտոնական ճաշկերույթ, որի ընթացքում Ավստրալիայի մի շարք բարձրաստիճան պաշտոնյաներ բարձր գնահատեցին հայ համայնքի ներդրումը երկրի հասարակական կյանքում: Իսկ Ավստրալիայի եկեղեցիների ազգային խորհրդի գլխավոր քարտուղար Ջոն Հենդերսոնը նշեց Հայ եկեղեցու եւ թեմա-



կալ առաջնորդ Տեր Աղան արք. Պալիոզյանի նշանակալից դերը ԵՀԽ-ի հիմնադրման գործում (նա ԵՀԽ-ի առաջին եւ մշտական նախագահն է):

Պատասխան խոսքում Նորին Սրբությունը, դիմելով Սիդնեյի հայ համայնքի ներկայացուցիչներին, կոչ արեց մասնակից լինել մայր հայրենիքի կառուցման գործին ու հայրենաշեն բոլոր ձեռնարկումներին: Վեհափառը հորդորեց Ավստրալիայի կառավարությանը՝ հետեւել Նյու Սաութ Ուելսի խորհրդարանի որոշմանը եւ պաշտոնապես ճանաչել 1915 թ. հայոց ցեղասպանությունը՝ այդպիսով դատապարտելով մարդկության դեմ գործված ոճրագործությունը:

Սիդնեյում Վեհափառ Հայրապետն այցելեց նաեւ համայնքի անդամներին, եղավ Սիդնեյի 3 հայկական դպրոցներում: Այստեղ Հայոց Հայրապետին դիմավորեցին բուռն ծափողջույններով ու մեծ ոգեւորությամբ: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ երեխաներն են համայնքի մեծագույն գանձն ու ապագան, եւ հորդորեց միշտ «վառ պահել հայկական կրակը սաների աչքերում»: Նշանակալից էր Համազգայինի՝ Արշակ եւ Սոֆի Գալստոն դպրոցում տեղի ունեցած հանդիպումը: Նորին Սրբությունը, իր օրհնությունը տալով դպրոցի բակում եկեղեցի կառուցելու նախաձեռնությանը, նշեց, որ անձամբ կմասնակցի եկեղեցու օծմանը՝ այն կոչելով Սբ. Էջմիածին՝ ի նշանավորումն եկող տարի Սբ. Էջմիածնի Մայր տաճարի օծման 1700-ամյա հոբելյանի:

Նոյեմբերի 20-ին Վեհափառ Հայրապետը հանդիպեց թեմական ժողովի եւ եկեղեցական խորհրդի անդամների հետ: Հանդիպումների ընթացքում քննարկվեցին Հայ եկեղեցուն եւ թեմին առնչվող մի շարք հարցեր:

Նույն օրը՝ կեսօրից հետո, ի պատիվ Հայոց Հայրապետի, Նյու Սաութ Ուելսի կառավարական տանը տեղի ունեցավ



պաշտոնական ընդունելություն: Հայոց հոգեւոր առաջնորդին ողջունեց նահանգի վարչապետ Բոբ Քերին: Խոսելով հայ համայնքի մասին՝ վարչապետը վերհիշեց 1997 թ. երջանկահիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի այցն Ավստրալիա եւ Վեհափառ Հայրապետին տված իր խոստումը՝ հայ համայնքի նկատմամբ հոգատար լինելու մասին: Պրն. Քերին անդրադարձավ նաեւ հայ ժողովրդի դժվարին պատմությանը եւ 1915 թ. հայոց ցեղասպանության վերաբերյալ Նյու Սաութ Ուելսի պառլամենտի կողմից հինգ տարի առաջ ընդունած բանաձեւին: Վարչապետը հույս հայտնեց, որ շուտով կստեղծվի նաեւ Նյու Սաութ Ուելս-Հայաստան բարեկամության միությունը: Պատասխան խոսքում Վեհափառ Հայրապետն իր երախտագիտությունը հայտնեց հայ համայնքի հանդեպ ցուցաբերած հոգատարության համար եւ գոհունակություն հայտնեց՝ նահանգային կառավարության եւ հայ համայնքի միջեւ առկա ջերմ կապերի առնչությամբ: Նորին Սրբությունը հույս հայտնեց, որ այդ բարեկամությունն իր արտահայտությունը կգտնի նաեւ կառավարական մակարդակներում:

Երեկոյան Վեհափառ Հայրապետն Ուիլոբիի հանդիսասրահում հանդիպում ունեցավ երիտասարդության հետ: Գեղարվեստական ծրագրից հետո Նորին Սրբությունը պատասխանեց երիտասարդությանը հետաքրքրող բազմաթիվ ու բազմաբնույթ հարցերի՝ առնչված Հայ եկեղեցու խնդիրներին, եկեղեցական կյանքում երիտասարդության դերին, ինչ-



պես նաեւ միասեռականությանը, մարդու կլոնավորմանը եւ այլ խնդիրների վերաբերող հարցերի:

Նոյեմբերի 21-ին, Վեհափառ Հայրապետի հանդիսապետությամբ, Սիդնեյի Սուրբ Հարություն հայկական եկեղեցում տեղի ունեցավ միասնական աղոթք: Արարողությանը ներկա ավելի քան 300 հայորդիք առիթ ունեցան լսելու Հայոց Հայրապետի պատգամը:

Նույն օրը Վեհափառ Հայրապետն այցելեց Նյու Սաութ Ուելսի նահանգապետ տիկին Մարի Բաշիրին: Հանդիպմանը ներկա էր նաեւ Սիդնեյի նախկին քաղաքագլուխ Նիկոլաս Շիհեդին: Զրուցակիցներն անդրադարձան ժամանակի հրատապ հարցերին՝ կարեւորելով աշխարհում բոլոր ժողովուրդների միջեւ խաղաղության հաստատումը: Երեկոյան Սիդնեյի Սբ. Անդրեաս մայր տաճարում Վեհափառ Հայրապետը մասնակցեց էկումենիկ արարողության: Արարողությանը ներկա էին քույր եկեղեցիների ներկայացուցիչներ, ինչպես նաեւ ծխական անդամներ: Իր խոսքում Վեհափառ Հայրապետը ներկայացրեց Հայ Առաքելական եկեղեցու դերը էկումենիկ շարժման զարգացման գործում: Արարողության ավարտից հետո տեղի ունեցած ընդունելության ընթացքում Նորին Սրբությունը հանդիպեց քույր եկեղեցիների ներկայացուցիչների հետ:

Վեհափառ Հայրապետն այցելեց նաեւ Բրուկվեյլի «Ալեքսանդր» ծերանոց: Այս հաստատությունն իր տեսակի մեջ միակն է Սիդնեյում, որտեղ բնակվում են հայախոս տարեցներ: Նորին Սրբությունն իր օրհնությունը տվեց ծերերին եւ աղոթեց նրանց համար, մտերմիկ զրույց ունեցավ նրանցից



յուրաքանչյուրի հետ: Հայոց Հայրապետն իր գնահատանքը տվեց նաեւ ծերանոցի աշխատակազմին ու տնօրինությանը՝ ծերերի հանդեպ նրանց հոգատարության համար:

Նույն օրը Նորին Սրբությունը հանդիպում ունեցավ Ավստրալիայի վարչապետ Ջոն Հովարդի հետ: Զրույցի ընթացքում Վեհափառ Հայրապետն ու վարչապետը անդրադարձան վերջերս Բալիում տեղի ունեցած ողբերգությանը եւ դատապարտեցին ահաբեկչությունը՝ իբրեւ մարդկության դեմ ուղղված չարիք:

Վեհափառ Հայրապետն այցելեց նաեւ Նյու Սաութ Ուելսի խորհրդարան եւ ծաղկեպսակ դրեց խորհրդարանի բակում տեղադրված հայոց ցեղասպանության հուշակոթողին: Ընդունելով հրավերը՝ Նորին Սրբությունը մասնակցեց նաեւ խորհրդարանի նիստին: Ապա, ի պատիվ Հայոց Հայրապետի, խորհրդարանի խոսնակ Ջոն Մըրեյի կողմից տեղի ունեցավ ընդունելություն:

Կեսօրից հետո Վեհափառ Հայրապետը հանդիպեց Ուիլոբիի քաղաքագլուխ Պատրիկ Ռեյլիի հետ: Հանդիպման ավարտին տեղի ունեցավ ընդունելություն, որին ներկա էին քաղաքային խորհրդի ներկայացուցիչներ, հայկական տարբեր կազմակերպությունների անդամներ, լրագրողներ:

*Շարունակությունը էջ 2*

